ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/120 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Աջափնյակ վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների ամառային ճամբար մեկնող 7-13 տարեկան երեխաների համար՝ ամառային մարզահագուստ /լրակազմ/, որը ներառում է կարճաթև պոլո տեսակի տրիկոտաժե շապիկ, կիսատաբատ և արևային գլխարկ: Պոլո շապիկ - պետք է պատրաստված լինի (ՊԻՔՈՒԵ-PIQUE) տրիկոտաժե շնչող կտորից, հակաալերգիկ, բաղադրությունը՝ նվազագույնը 80% բամբակ, էլաստեն /պիտակի վրա առկա լինի կտորի հումքի բաղադրությունը, օգտագործման և պահպանման պայմանները /, պոլո շապիկի գործվածքի նվազագույն խտությունը 210 գր./1մ² /ներկայացնել հումքի խտությունը հավաստող փաստաթուղթ/: Գույնը օրանժ, գույնի երանգը համաձայնեցնելով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ: Օձիքը ծալովի, առջևից 2 կոճակով կոճկվող, իսկ կոճակի տրամագիծը 8-10մմ, աղջիկների պոլո շապիկի կոճակները ձախից, տղաներինը՝ աջից: Շապիկի մեջքին օձիքից 10-12 սմ ներքև, տպագիր մեծատառերով /print տարբերակով/, կենտրոնում կամարաձև սև գույնով գրված լինի «ԱՋԱՓՆՅԱԿ»: Տառերի երկրաչափական չափսերը՝ բարձրությունը առնվազն 7սմ, տառերի լայնությունը առնվազն 4սմ, տառերի մասնիկների լայնությունը առնվազն 1սմ, տառերի հեռավորությունը՝ 1սմ: Երկրաչափական չափերի շեղումը՝ - +3%: Շապիկը լինի ուղիղ ձևածքով՝ ներքևի մասում առնվազն 3-5 սմ երկարությամբ 2 կողային բացվածքով /որopex/: Կիսատաբատ – շորտ Կիսատաբատները սև գույնի, պետք է պատրաստված լինեն տրիկոտաժից: Կտորի բաղադրությունը՝ 60% բամբակ, 35% պոլիեսթեր, 5% էլաստեն /պիտակի վրա առկա լինի կտորի հումքի բաղադրությունը, օգտագործման և պահպանման պայմանները/, գործվածքի նվազագույն խտությունը 250 գր./1մ² /ներկայացնել հումքի խտությունը

	հավաստող փաստաթուղթ/: Կիսատաբատ շորտը գոտկատեղում ունենա ռեզին: Ռեզինի լայնությունը նվազագույնը 2 սմ: Շորտի ստորին հատվածը լինի ծնկից ներքև նվազագույնը 3-5սմ, հարմարավետության համար ունենա նաև կողային երկու գրպաններ: Երկրաչափական չափերի շեղումը՝ - +3%: Կեպի Արևային գլխարկ սև գույնի, որը պետք է պատրաստված լինի կոշտ երեսկալով, ամուր և չճկվող: Գլխարկի հումքի բաղադրությունը լինի 35% բամբակ՝ առնվազն 330 գրամ մակերեսային խտությամբ բամբակե գործվածք, 65% պոլիէսթեր /ներկայացնել հումքի բաղադրությունը հավաստող փաստաթուղթ/: Կոշտ հովհարի /козырек/ լայնքը՝ քունքից քունք 18սմ, երկարությունը 12 սմ: Կեպի գլխարկի տրամագծի կարգավորումը ետևի մասում կպչուկով /липучка/: Պատրաստված լինի 6 սեպից և օդափոխության անցքերից՝ նվազագույնը 6 անցք, նվազագույնը 1-2մմ տրամագծով (լյուվերսներով): Մարզական լրակազմի չափերը նախատեսված լինի 7-13 տարեկան տղաների և աղջիկների համար: Չափերի քանակի, ինչպես նաև տղա-աղջիկ թվաքանակի համամասնության հայտը Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կներկայացվի մատակարարումից 7 օր առաջ, 2 փուլով՝ յուրաքանչյուր փուլում 40 երեխա /տղա և աղջիկ/:Մատակարարումը իրականացնել փուլային տարբերակով: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ, քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսակապով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

НАТИВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/120 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	